ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(31 օգոստոսի, 2023 թ.)

Գերագույն հոգեւոր խորհուրդը, անդրադառնալով հայրենիքի առջեւ ծառացած գոյաբանական մարտահրավերներին եւ դրանց հետեւանքով Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում ստեղծված կացությանը, արձանագրում է, որ հայրենական կյանքում առկա իրավիճակը ծայրահեղ մտահոգիչ է։

Ադրբեջանական իշխանությունների օգտագործած հռետորաբանությունը, ինչպես նաեւ նախաձեռնած քայլերն ակներեւ են դարձնում, որ վերջինս պաշտոնապես որդեգրել է ոչ միայն Արցախի Հանրապետությունը, այլեւ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքները բռնազավթելու, էթնիկ հայկական ինքնության հետքերն ու ժառանգությունը ոչնչացնելու քաղաքականություն՝ նպատակ հետապնդելով կազմաքանդել հայոց պետականությունը։ Ադրբեջանը ոչ միայն չի դադարեցնում Արցախի շրջափակումը, այլեւ շարունակում է իրականացնել ցեղասպան իր քաղաքականությունը՝ թշնամանքի ու բռնության նորանոր դրսեւորումներով։ Ադրբեջանի պետական եւ հանրային ողջ քարոզչամեքենան լծված է հակապատմագիտական թեզերի միջոցով հանրային լայն հարթակներում հայոց պետականության եւ ողջ հայության դեմ կեղծ ու հերյուրածին տեղեկությունների տարածմանը։

Առկա բարդ ու վտանգավոր զարգացումների հանդիման առավել քան մտահոգիչ են Հայաստանի իշխանությունների անհամաչափ արձագանքներն ու վարքագիծը։ Մերժելի է հատկապես Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելու վերաբերյալ Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը, որը չունի բարոյական, իրավական ու անվտանգային որեւէ հիմնավորում եւ բացարձակապես չի համապատասխանում մեր ժողովրդի հավաքական սպասումներին ու ազգային շահերին։ Հայաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունն անսակար-

կելի են, Արցախի ժողովրդի հանրաքվեով իրացված ինքնորոշման իրավունքը՝ անվիճարկելի։

Գերագույն հոգեւոր խորհուրդը բարձր է գնահատում Արցախյան խնդրի կարգավորման ուղղությամբ միջազգային կառույցների ներդրած ջանքերը։ Այսուհանդերձ՝ Արցախի հայության առջեւ ծառացած անմիջական սպառնալիքների համատեքստում միջազգային կառույցների կողմից իրականացվող քայլերն ու նախաձեռնությունները, ցավոք, շարունակում են մնալ անհամարժեք։

Հայրենիքի առջեւ ծառացած գոյաբանական մարտահվերների հաղթահարման համար ՀՀ իշխանությունները պարտավոր են ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կհամախմբեն ազգային, քաղաքական եւ հասարակական կառույցների ողջ ներուժն ու կարողությունները Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում։ Հայրենիքն ամենքինս է, հայոց պետականությունը՝ սրբազան մասունքը յուրաքանչյուր հայի։

Արցախի Հանրապետության տոնին՝ սեպտեմբերի 2-ին ընդառաջ, Գերագույն հոգեւոր խորհուրդն իր զորակցությունն է բերում Արցախի քաջարի ժողովրդին՝ հայրենի երկրում ազատ, անկախ ու արժանապատիվ կյանքի համար հերոսական իր պայքարում։

Գերագույն հոգեւոր խորհրդի կոչն է մեր ժողովրդին՝ ամենայն սթափությամբ գնահատել երկրում ստեղծված իրավիճակը, թոթափել անտարբերության թմբիրը, հանձնառություն ստանձնել հայրենիքի համար եւ ամենուր մասնակից ու աջակից դառնալ Արցախի անկախության պաշտպանությանն ուղղված ծրագրերին ու միջոցառումներին։

Ամուր վստահություն ունենք, որ Աստծու եւ սերունդների առջեւ ամբողջանվեր պատասխանատվությամբ եւ մեր նախնյաց քաջարի ոգով ու տոկունությամբ կարող պիտի լինենք հաղթահարելու մեզ բաժին ընկած ծանրագույն մարտահրավերները։

Թող Աստված օրհնի երկիրն հայրենի եւ ժողովրդյանն հայոց. ամեն։